

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

2908 «ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԾԵՓԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«ԾԵՓԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ

ՄԱՍՆԱԳԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 2908 «ՀԱՐԴԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ Նախնական մասնագիտական (արհեստագործական)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝ Ծեփագործ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ Միջնակարգ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 Տարի ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁևԸ՝ առկա

(ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ) «_»_20_ թ>

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Table with 4 columns for week numbers (1-4) and rows for various subjects including 'Կուրսը' (Course), 'սեպտեմբեր' (September), 'հոկտեմ' (October), 'նոյեմբեր' (November), 'դեկտեմբեր' (December), 'հունվ.' (January), 'փետրվ' (February), 'մարտ' (March), 'ապրիլ' (April), 'մայիս' (May), 'հունիս' (June), 'հուլիս' (July), 'օգոստոս' (August), and 'II. Ժամանակի քլուջեն /շաբաթներով/' (II. Time allocation /weeks/).



Տեսական ուսուցում



Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ



Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման



Նախաավարական, արտադրական պրակտիկա



Մոդուլների ամփոփում



Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման



Ամփոփիչ պետական ատեստավորում



Արձակուրդ

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
		Քննույթ.	Ստուգաթղթ.	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս			
					Ընդամենը	Այդ թվում		3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս. 14 շաբ.	6-րդ կիս. 14 շաբ.	7-րդ կիս. 2աբ.	8-րդ կիս. 2աբ.		
				Տեսակ. ուսուցում		Լաբոր. և գործն. աշխ.	Մեմինար պարապմունք								
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5 6(տ)		72	12	60				30	42			
1.2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		5(տ)		18	9	9				18				
1.3	Իրավունքի հիմունքներ		6(տ)		36	18	18					36			
1.4	Պատմություն		5(տ)		36	18	18				36				
1.5	Օտար լեզու		5, 6(տ)		60		60				26	34			
1.6	Ֆիզիկական կուլտուրա		5, 6(տ)		56		56				28	28			
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		5(տ)		36	18	18				36				
2.2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		5(տ)		18	9	9				18				
	ԸՆԴԱՄԵՆԸ				332	84	248				192	140			
3.	ԱՌԱՏՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
3.1	Հաղորդակցություն		6(տ)		36	6	30					36			
3.2	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		6(տ)		36	16	20					36			
3.3	Համակարգչային օպերատորություն		6(տ)		54		54					54			
3.4	Անվտանգություն և առաջին օգնություն		5(տ)		36	24	12				36				
	ԸՆԴԱՄԵՆԸ				162	46	116				36	126			
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ														
4.1	Շինարարական նյութեր ձեփագործական աշխատանքների իրականացման համար		5(տ)		72	32	40				72				
4.2	Չափագիտություն		5(տ)		36	18	18				36				
4.3	Բարձրությունների վրա ձեփագործական աշխատանքներում օգտագործվող փայտամանների, լաստակների կառուցում, հավաքում, քանդում		5(տ)		20	4	16				20				
	ԸՆԴԱՄԵՆԸ				128	46	82				128				
5.	ՀՄՏՈՒԿ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ														
5.1	Շենքերի և շինությունների արտաքին և ներքին մակերեսների ձեփապատման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ		6(տ)		72		72					72			
5.2	Ներքին և արտաքին մակերևույթների ձեփապատում		5,6(տ)		72		72				40	32			
5.3	Առաստաղի ձեփապատման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ		5(տ)		54		54				54				
5.4	Առաստաղի ձեփապատման աշխատանքների իրականացում		5(տ)		54		54				54				
5.5	Մակերևույթների չոր սվաղի թերթերով երեսպատման աշխատանքների իրականացում		6(տ)		72		72					72			
5.6	Պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացում		6(տ)		36		36				36				

		ԸՆԴԱՄԵՆԸ			360		360			252	108		
6.	ԸՆՏՐՈՎԻ		6ս		10						10		
	ՊԱՀՈՒՍՏԱՑՅՐՆ ԺԱՄԵՐ				16						16		
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				100								
		ԸՆԴԱՄԵՆԸ			1008	184	798			504	504		
	Շաբաթվա ժամերի քանակը									36	36		

	IV. ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՀՐԱԺԵՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Վարվելակերպի հիմունքներ				ԿԱՔԻՆԵՏՆԵՐ
2	Ընտանեկան կյանքի հիմունքներ			1	մասնագիտական տեխնոլոգիայի և շինարարական նյութերի
				2	չափագիտության
				3	անհատական համակարգիչների
				4	հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	օտար լեզվի
1	Արտադրական	5	4	6	աշխատանքի անվտանգության
2	ՈՒՎՈՒՄՆԱԿԱՆ	6	4	7	ծեփագործական մակերևույթների հարթեցման և հղկման
3	Արտադրական	6	3		
	ԸՆԴԱՄԵՆԸ		11		
	VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ				ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
	Համալիր քննություն հատուկ մասնագիտական մոդուլներից /հունիսի 29-ից հուլիսի 5-ի շրջանում/			1	շինարարական նյութերի
					ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ
				1	ծեփագործական աշխատանքների
				2	ծեփագործական գործիքների և շինվածքների
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱԽԻՐ

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
- Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
- Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:

5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

Մոդուլի անվանումը՝ «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ՀՂՀ 3-11-001

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

տեսական պարապմունք՝ 6 ժամ

գործնական պարապմունք՝ 30 ժամ

Մոդուլի նպատակը՝ սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

Մուտքային պահանջները՝ մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:

Արդյունքները

1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները,
2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին,
3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ,
4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ,
5. Կատարել փաստաթղթավորում:

Գնահատման կարգը՝ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

Կատարման չափանիշները.

- ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Հարց ու պատասխանի միջոցով հնարավոր կլինի պարզել ուսանողը կարողանում է սահմանել ուսումնառության տարբեր եղանակները, անձնական նպատակները, կարողանում է պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերի 80%-ին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն և ժամանակակից տեխնիկայով հագեցած տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք 6 ժամ:

Արդյունք 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին:

Կատարման չափանիշները.

- ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ. տեղեկատվության առանձնացում /խմբավորումը կատարում է նպատակային,
- դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման համար պետք է ստեղծել այնպիսի իրավիճակ, որի ընթացքում ուսանողները կմտնեն երկխոսության մեջ և կօգտագործեն բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքները, յուրաքանչյուրի հաղորդումը պետք է պարունակի պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 60%-ով բավարարում տեղեկատվական հաղորդման պահանջները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն և ժամանակակից տեխնիկայով հագեցած տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 10 ժամ:

Արդյունք 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ:

Կատարման չափանիշները.

- ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը),
- բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,
- դ. կատարում է ճիշտ ամփոփում /եզրափակում:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման համար պետք է ստեղծել այնպիսի իրավիճակ, որի ընթացքում ուսանողները կմտնեն միմիյանց հետ երկխոսության մեջ և կքննարկեն որևէ թեմա և յուրաքանչյուրը պետք է կարողանա կիրառել «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը), ձևակերպի, արտահայտի և պաշտպանի է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, ցուցաբերի համոզելու կարողություն, ճիշտ ամփոփի/եզրափակի քննարկումը:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 60%-ով բավարարում երկխոսությունների, քննարկումների պահանջները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն և ժամանակակից տեխնիկայով հագեցած տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 10 ժամ:

Արդյունք 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ,

Գատարման չափանիշները.

ա. Ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,

բ. Ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.

գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման համար պետք է ուսանողին տրամադրել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ, նկարներ, այլ տեսանյութեր և ուսանողը պետք է բացատրի դրանց նշանակությունը, տա մեկնաբանություններ՝ օգտագործելով խոսքի համապատասխան կառուցվածք:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 60%-ով ճիշտ է մեկնաբանում առաջադրված նյութի բուն էությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ, նկարներ, ուսումնամեթոդական գրականություն և ժամանակակից տեխնիկայով հագեցած տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 10 ժամ:

Մոդուլի անվանումը՝ <<ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ>>

Մոդուլի դասիչը՝ ԸԱՀ 3 -11-001

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում՝ 16 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 20 ժամ

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.
2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
3. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.
4. դրսևորի քննադատական մտածողություն.
5. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

Գնահատման կարգը` մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

Կատարման չափանիշներ

- ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
- գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
- դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բանավոր ներկայացնում իր կենսագրությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական ուսուցում` 4 ժամ
 Գործնական պարապմունք` 6 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում գործերը նկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.
- գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.
- դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ հարցերի առնվազն 70 %-ին:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական պարապմունք՝ 3 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.
- բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում պատշաճ հարաբերություն դրսևորելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական պարապմունք՝ 2 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Դրսևորել քննադատական մտածողություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.
- բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.
- գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 3 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.
- բ. ճիշտ է կազմում իր աշխատանքային պլանը (պայմանական աշխատանքային պլան).
- գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները.
- դ. բացահայտում և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում.
- ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.
- զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.
- է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը, ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում` 4 ժամ
- Գործնական պարապմունք` 6 ժամ:

Մոդուլի անվանումը` *«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»*

Մոդուլի դասիչը` *ՀՕՀ 3-11-001*

Մոդուլի տևողությունը` *54 ժամ*

գործնական պարապմունք` 54 ժամ

Մոդուլի նպատակը` *Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:*

Մուտքային պահանջները` *մոդուլն ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ պետք չէ:*

Արդյունքները

- 1. WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ),
- 2. Տեքստերի տարրական ֆորմատավորում,
- 3. Փաստաթղթի պահպանում,
- 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում,

5. Գրաֆիկական խմբագրում և նկարագարում,
6. Փաստաթղթի տպագրում,
7. Ինտերնետում աշխատելու իմացություն:

Գնահատման կարգը՝ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ):

Կատարման չափանիշները.

- ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը,
- բ. բացել նոր փաստաթուղթ,
- գ. ստեղծարարի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,
- դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ,
- ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում,
- զ. փակել փաստաթուղթը,
- է. բացել առկա փաստաթուղթը,
- ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով տեքստային նյութ, որը պետք է պարունակի մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ: Ուսանողը Microsoft Word ծրագրում բացելով նոր փաստաթուղթ պետք է մուտքագրի առաջադրված տեքստը, ամրագրելով համակարգչի հիշողության մեջ փակի փաստաթուղթը, բացել առկա փաստաթուղթը, ցույց տալ Zoom գործիքի հնարավորությունները Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 90%-ով ճիշտ է իրականացնում բոլոր գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 10 ժամ:

Արդյունք 2. Տեքստերի տարրական ֆորմատավորում:

Կատարման չափանիշները.

- ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
- բ. նշել բառերը և տեքստային հատվածները,
- գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,
- դ. կատարել տողերի հավասարեցում,
- ե. փոխել միջտողային տարածությունները,
- զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով,
- է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով,
- ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,

թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,

ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,

ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,

ժբ. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right

թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը,

ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ,

ժգ. պատճենել տեքստը,

ժդ. տեղափոխել տեքստը,

ժե. տողադարձել տեքստը,

ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները

Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով տեքստային

նյութ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա մուտքագրել տեքստ հայերեն և օտար լեզվով, նշի

որոշ բառերը և տեքստային հատվածներ, կատարի մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,

տողերի հավասարեցում, փոխի միջտողային տարածությունները, տեքստի գույնը Font Color գործիքով, գունային

ֆոնը Highlight գործիքով, պարբերության խորությունները լուսանցքներից, չեղյալ հայտարարի կատարած

գործողությունները, վերականգնի նախկին նյութը, պատճենի, տեղափոխի, համարակալի տեքստը և այլն:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 80%-ով ճիշտ է իրականացնում բոլոր

գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել

գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 10 ժամ:

Արդյունք 3. Փաստաթղթի պահպանում:

Կատարման չափանիշները.

ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը,

բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,

գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները

Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով տեքստային

նյութ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,

ինչպես նաև պահպանի փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 90%-ով ճիշտ է իրականացնում բոլոր

գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 2 ժամ:

Արդյունք 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում:

Կատարման չափանիշները.

- ա. պատրաստել աղյուսակ,
- բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
- գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,
- դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուններ աղյուսակի մեջ,
- ե. ջնջել աղյուսակի տողերը և սյունները,
- զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ,
- է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ,
- ը. փոխել աղյուսակի գծերի գույնը,
- թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով աղյուսակային նյութ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա պատրաստել աղյուսակ, աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, կատարի ուղղումներ ու լրացումներ, ավելացնի նոր տողեր և նոր սյուններ, ջնջի աղյուսակի տողերը և սյունները, փոխել սյունակի լայնությունը և բարձրությունը Մկնիկի օգնությամբ, փոխի աղյուսակի գծերի գույնը, գունավորի աղյուսակի տողը և սյունը:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 90%-ով ճիշտ է իրականացնում բոլոր գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 10 ժամ:

Արդյունք 5. Գրաֆիկական խմբագրում և նկարագրում:

Կատարման չափանիշները.

- ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ,
- բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,
- գ. գծագրել կանոնավոր պատկերներ,
- դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով,
- ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,

- գ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,
- է. գծագրել տեքստային բլոկներ,
- ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները,
- թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,
- ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել որևէ գրաֆիկական օբյեկտ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գծագրել կանոնավոր պատկերներ, ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով, խմբավորել գրաֆիկական օբյեկտները, հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, գծագրել տեքստային բլոկներ, գունավորել, երանգավորել ստվերավորել գրաֆիկական օբյեկտները,

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 70%-ով ճիշտ է իրականացնում բոլոր գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 10 ժամ:

Արդյունք 6. Փաստաթղթի տպագրում:

Կատարման չափանիշները.

- ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,
- բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,
- գ. տպագրել փաստաթուղթը:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել որևէ պատրաստի նյութ: Պետք է կարողանա նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, տպագրել փաստաթուղթը:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 80%-ով ճիշտ է իրականացնում բոլոր գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 2 ժամ:

Արդյունք 7. Բնտերնետում աշխատելու իմացություն:

Կատարման չափանիշները.

- ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,
- բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,
- գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը,
- դ. իմանալ History հրամանի նշանակությունը,
- ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,
- զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,
- է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,
- ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,
- թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,
- ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,
- ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
- ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն,
- ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Internet Explorer ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել ինտերնետի մուտքով համակարգիչ: Ուսանողը պետք է կարողանա ցույց տա History, Favorites, Stop, Refresh, Back և Forward հրամանների օգտագործման կարողությունները, որոնի, գտնի, պատճենի տարաբնույթ ինֆորմացիա ինտերնետային էջից, կարողանա էլեկտրոնային հասցե բացել, ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 80%-ով ճիշտ է իրականացնում բոլոր գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, ինտերնետային մուտքով համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 10 ժամ:

Մոդուլի անվանումը՝ *«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»*

Մոդուլի դասիչը՝ *ԱՍՕ 3-11-001*

Մոդուլի տևողությունը՝ *36 ժամ*

Տեսական պարապմունք՝ *24 ժամ*

Գործնական պարապմունք՝ *12 ժամ*

Մոդուլի նպատակը՝ սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:

Մուտքային պահանջները՝ մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:

Արդյունքները

1. Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում,
3. Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները,
4. Ցուցաբերել առաջին օգնություն:

Գնահատման կարգը՝ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,

Կատարման չափանիշները.

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը,
- բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը,
- դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները,
- ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը,
- զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Հարց ու պատասխանի միջոցով հնարավոր կլինի պարզել ուսանողի գիտելիքները աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերի, կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերի, աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվության, աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերի և մեխանիզմների, արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգի, աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվության վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերի 80%-ին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն և ժամանակակից տեխնիկայով հագեցած տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք 8 ժամ:

Արդյունք 2. Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում,

Կատարման չափանիշները.

ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,

բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,

գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները,

դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Հարց ու պատասխանի միջոցով հնարավոր կլինի պարզել ուսանողի գիտելիքները տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի, էլեկտրաանվտանգության, հակահրդեհային պաշտպանության, ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնների վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերի 80%-ին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն և ժամանակակից տեխնիկայով հագեցած տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք 8 ժամ:

Արդյունք 3. Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները,

Կատարման չափանիշները.

ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,

բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները,

գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,

դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Հարց ու պատասխանի միջոցով հնարավոր կլինի պարզել ուսանողի գիտելիքները արտադրական սանիտարիայի և հիգիենայի, արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջների, արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցների, արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջների և նորմերի վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերի 80%-ին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն և ժամանակակից տեխնիկայով հագեցած տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք 8 ժամ:

Արդյունք 4. Ցուցաբերել առաջին օգնություն:

Կատարման չափանիշները.

- ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը,
- բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը,
- գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ,
- դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները,
- ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը,
- զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:

Գնահատման միջոցը. Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի առաջին օգնություն ցուցաբերելու կարողությունը, դրա համար պետք է տրամադրել խրտվիլակներ, որոնց վրա ուսանողը կկարողանա ցուցադրել արհեստական շնչառության, սրտի աշխատանքի վերականգնման, արյան հոսքի դադարեցման, այրվածքների, էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացմանն ուղղված միջոցառումները:

Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 80%-ով ճիշտ է իրականացնում յուրաքանչյուր միջոցառում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցանման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, խրտվիլակ և ժամանակակից տեխնիկայով հագեցած տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք 12 ժամ:

Մոդուլի անվանումը` <<ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԾԵՓԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ >>

Մոդուլի դասիչը` ՀՇԱԻ-3-11 -001

Մոդուլի տևողությունը` 72 ժամ

Տեսական պարապմունք` 32 ժամ

Գործնական պարապմունք` 40 ժամ

Մոդուլի նպատակը` Սովորողի մոտ ձևավորել գիտելիքներ` ծեփահարդարման ընթացքում օգտագործվող շինարարական նյութերի վերաբերյալ:

Մուտքային պահանջներ` այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Արդյունքները

1. Իմանալ և տարբերել ծեփամածիկների ու շաղախների տեսակները, հատկությունները, «չոր» սվաղի համար օգտագործվող նյութերը և դրանց կիրառման բնագավառները

2. Իմանալ և տարբերել «չոր սվաղի» տեսակները, հատկությունները, կիրառման բնագավառները

3. Իմանալ և տարբերել ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող շինարարական նյութերի (ծեփամածիկներ, շաղախներ տարբեր հիմքերի վրա՝ ցեմենտային, կրային, կրա-ցեմենտային, կրա-կավային, կրա-գիպսային և այլն) տեսակները, հատկությունները, կիրառման բնագավառները

4. Կարողանալ պատրաստել տարբեր տեսակի շաղախներ, ծեփամածիկներ

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ և տարբերել ծեփամածիկների ու շաղախների տեսակները, հատկությունները, «չոր» սվաղի համար օգտագործվող նյութերը և դրանց կիրառման բնագավառները

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ներկայացնում ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող ծեփամածիկների, շաղախների տեսակները,

բ. ճիշտ է ներկայացնում ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող ծեփամածիկների, շաղախների հատկությունները,

գ. ճիշտ է ներկայացնում ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող ծեփամածիկների, շաղախների կիրառման բնագավառները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեսթի և գործնական պարապմունքների հիման վրա:

Արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը կարող է պատասխանել թեստում ընդգրկված հարցերի 90 %-ին: Թեստում պետք է ընդգրկված լինեն հարցեր որոնցով հնարավոր կլինի ստուգելու ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող ծեփամածիկների, շաղախների տեսակները, և հատկությունները, ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող ծեփամածիկների, շաղախների կիրառման բնագավառները: Թեստում կարող են նշվել նաև սխալ և այլընտրանքային պատասխաններ:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ճիշտ ընտրել պահանջվող նյութի տեսակները և առանձնացնել պահանջվող չափաբաժինը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական և տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, ծեփագործական աշխատանքներում օգտագործվող շինարարական նյութեր (եմուլսիաներ, մածիկներ, ծեփամածիկներ, շաղախներ, սոսիձներ և այլն) և հնարավորության դեպքում տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

Արդյունք 2. Իմանալ և տարբերել «չոր սվաղի» տեսակները, հատկությունները, կիրառման բնագավառները

Գատարման չափանիշները

ա. ճիշտ է ներկայացնում «չոր սվաղով» երեսապատման աշխատանքներում օգտագործվող «չոր սվաղի» թերթերի տեսակները,

բ. ճիշտ է ներկայացնում «չոր սվաղով» երեսապատման աշխատանքներում օգտագործվող «չոր սվաղի» թերթերի հատկությունները,

գ. ճիշտ է ներկայացնում «չոր սվաղով» երեսապատման աշխատանքներում օգտագործվող «չոր սվաղի» թերթերի կիրառման բնագավառները:

դ. ճիշտ է ներկայացնում մետաղե հիմնակմախքով «չոր սվաղի» թերթերի կիրառման բնագավառները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու թեսթի և գործնական պարապմունքների հիման վրա:

Արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը կարող է պատասխանել թեստում ընդգրկված հարցերի 90 %-ին: Թեստում պետք է ընդգրկված լինեն հարցեր, որոնցով հնարավոր կլինի ստուգելու «չոր սվաղով» երեսապատման աշխատանքներում օգտագործվող «չոր սվաղի» թերթերի տեսակները, հատկությունները, կիրառման բնագավառները և մետաղե հիմնակմախքով «չոր սվաղի» թերթերի կիրառման բնագավառները: Թեստում կարող են նշվել նաև սխալ և այլընտրանքային պատասխաններ:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ճիշտ ընտրել պահանջվող «չոր սվաղի» թերթերի տեսակները և առանձնացնել պահանջվող չափաբաժինը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական և տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, ծեփագործական աշխատանքներում օգտագործվող «չոր սվաղի» թերթերի վերաբերյալ և հնարավորության դեպքում տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

Արդյունք 3. Իմանալ և տարբերել ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող շինարարական նյութերի (ծեփամածիկներ, շաղախներ տարբեր հիմքերի վրա՝ ցեմենտային, կրային, կրա-ցեմենտային, կրա-կավային, կրա-գիպսային և այլն) տեսակները, հատկությունները, կիրառման բնագավառները

Գատարման չափանիշները

ա. ճիշտ է ներկայացնում ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող շինարարական նյութերի տեսակները,

բ. ճիշտ է ներկայացնում ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող շինարարական նյութերի հատկությունները,

գ. ճիշտ է ներկայացնում տարբեր տեսակի շաղախների պատրաստման չափաբաժինները,

դ. ճիշտ է տարբերակում տարբեր հիմքերով շաղախների կիրառման բնագավառները,

ե. ճիշտ է ընտրում շաղախի տեսակըն ըստ առաջադրանքի:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու թեսթի և գործնական պարապմունքների հիման վրա:

Արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե ուսանողը կարող է պատասխանել թեստում ընդգրկված հարցերի 90 %-ին: Թեստում պետք է ընդգրկված լինեն հարցեր որոնցով հնարավոր կլինի ստուգելու ծեփահարդարման աշխատանքներում օգտագործվող շինարարական նյութերի, շաղախների տեսակները, հասկությունները, կիրառման բնագավառները: Թեստում կարող են նշվել նաև սխալ և այլընտրանքային պատասխաններ:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ճիշտ ընտրել պահանջվող շաղախների տեսակները ըստ իրենց առանձնահատկությունների և առանձնացնել պահանջվող չափաբաժինը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական և տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, ծեփագործական աշխատանքներում օգտագործվող շին. նյութեր, շաղախներ և հնարավորության դեպքում տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

Արդյունք 4. Կարողանալ պատրաստել տարբեր տեսակի շաղախներ, ծեփամածիկներ

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ընտրում շաղախների, ծեփամածիկների պատրաստման չափաբաժինները,

բ. ճիշտ է պատրաստում շաղախներ, ծեփամածիկներ՝ պահպանելով շինարարական նորմերի պահանջներին:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքների հիման վրա:

Արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե ուսանողը գործնական իրավիճակում, ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ճիշտ ընտրել և պատրաստել շաղախներ, ծեփամածիկներ և այլ նյութեր նախապատրաստական աշխատանքներում կիրառելու համար:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, ծեփագործական՝ նախապատրաստական աշխատանքներում օգտագործվող շաղախներ պատրաստելու համար անհրաժեշտ նյութեր (գաջ, ցեմենտ, ավազ, գիպս, էմուլսիա, ջուր, համապատասխան թասիկներ, կշեռքներ, հարիչներ, այլ նյութեր և հարմարանքներ) և հնարավորության դեպքում տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 8 ժամ

Մոդուլի անվանումը՝ <<ՉՍՓՍԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>

Մոդուլի դասիչը՝ ՀՇԱԻ-3-11-002

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

տեսական պարապմունք՝ 18 ժամ

գործնական պարապմունք՝ 18 ժամ

Մոդուլի նպատակը՝ այս մոդուլի նպատակն է սովորողին տալ համապատասխան գիտելիքներ և հմտություններ չափագիտության վերաբերյալ:

Մուտքային պահանջներ՝ այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Արդյունքները

1. Ներկայացնել չափագիտության հիմնական հասկացությունները և սկզբունքները:
2. Կատարել չափումներ:
3. Գտնել չափումների հետևանքով ի հայտ եկած սխալները:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ներկայացնել չափագիտության հիմնական հասկացությունները և սկզբունքները:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ներկայացնում չափագիտության հիմնական հասկացությունները՝ կապված չափման գործիքների հետ. (մետր, ուղղալար, անկյունաչափ, մակարդակաչափ),

բ. ճիշտ է ներկայացնում չափագիտության հիմնական եզրույթներն ու սահմանումները,

գ. ճիշտ է ներկայացնում չափագիտության սկզբունքները, մեթոդները, ձևերը և չափման սխալանքը,

դ. ճիշտ է ներկայացնում չափումների հիմնական եղանակները՝ ուղղակի և անուղղակի,

ե. ճիշտ է օգտվում նախագծերից, գծանկարներից, սխեմաներից՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար,

զ. ճիշտ է ներկայացնում չափագիտության հիմնական հասկացությունները՝ չափման ենթակա օբյեկտի բնութագրերի վերաբերյալ ֆիզիկական մեծությունները և չափողականությունները (ֆիզիկական միավորները՝ մետր, կգ, լիտր),

է. ճիշտ է կատարում գործիքների ստուգում և համեմատում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու թեսթի և գործնական պարապմունքների հիման վրա:

Արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը կարող է պատասխանել թեստում ընդգրկված հարցերի 90 %-ին: Թեստում պետք է ընդգրկված լինեն հարցեր որոնցով հնարավոր կլինի ստուգելու ուսանողի գիտելիքները չափագիտության հիմնական հասկացությունների, չափման գործիքների, չափման ֆիզիկական միավորների, չափագիտության հիմնական եզրույթների ու սահմանումների, չափագիտության սկզբունքների, մեթոդների, ձևերի և չափման սխալանքի, չափումների հիմնական եղանակների մասին: Թեստում կարող են նշվել նաև սխալ և այլընտրանքային պատասխաններ:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի՝ կարող է ճիշտ ընտրել պահանջվող չափման գործիքը (գործիքները), անհրաժեշտության դեպքում ստուգել գործիքների ճիշտ աշխատանքային վիճակը, նախագծերից առանձնացնել հարդարման աշխատանքներում անհրաժեշտ չափերը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական և տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, հարդարման աշխատանքներում օգտագործվող չափողական գործիքներ (մետր, անկյունակ, մակարդակաչափ՝ հաղորդակից անոթներով, հարթաչափ, ուղղալար և այլն) և հնարավորության դեպքում տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

Արդյունք 2. Կատարել չափումներ:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կատարում ֆիզիկական մեծությունների չափումները, որոշում դրանց միավորային արժեքը՝ մետր, լիտր, կիլոգրամ,

բ. ճիշտ է կատարում նախագծային չափերի տեղայնացում, մակերեսների վրա գծանշում՝ ըստ պահանջվող լուծումների,

գ. ճիշտ է որոշում գծերի և հարթությունների ուղղաձիգությունը և հորիզոնականությունը,

դ. ճիշտ է կատարում անհրաժեշտ չափումներ մակերեսների և ծավալների հաշվարկման համար,

ե. ճիշտ է ներկայացնում չափման արդյունքների մշակման եղանակները,

զ. ճիշտ է կատարում մակերեսների և ծավալների հաշվարկները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու թեսթի և գործնական պարապմունքների հիման վրա:

Արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը կարող է պատասխանել թեստում ընդգրկված հարցերի 90 %-ին: Թեստում պետք է ընդգրկված լինեն հարցեր որոնցով հնարավոր կլինի ստուգելու ուսանողի գիտելիքները չափման արդյունքների մշակման եղանակների, մակերեսների և ծավալների հաշվարկման վերաբերյալ: Թեստում կարող են նշվել նաև սխալ և այլընտրանքային պատասխաններ:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել ֆիզիկական մեծությունների չափումներ, որոշել դրանց միավորային արժեքը՝ մետր, լիտր, կիլոգրամ և այլն, նախագծային չափերի տեղայնացում մակերեսի վրա, գծանշում ըստ պահանջվող լուծումների, կատարում է չափումներ մակերեսների և ծավալների հաշվարկման համար, կատարում է մակերեսների և ծավալների հաշվարկ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական և տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, հարդարման աշխատանքներում օգտագործվող չափողական գործիքներ (մետր, անկյունակ, մակարդակաչափ՝ հաղորդակից անոթներով, հարթաչափ, ուղղալար, համապատասխան մակերես գծնաշման համար և այլն) և հնարավորության դեպքում տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

Արդյունք 3. Գտնել չափումների հետևանքով ի հայտ եկած սխալները:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է գտնում սխալները և այդ սխալների վերացման եղանակները,

բ. ճիշտ է գտնում համակարգված սխտեմատիկ սխալները և այդ սխալների վերացման եղանակները,

գ. ճիշտ է գտնում պատահական սխալը և այդ սխալի հնարավոր նվազեցման եղանակները,

դ. ճիշտ է գտնում ճշգրիտ, մոտավոր թվերը և կատարում թվերի կլորացում,

ե. ճիշտ է կատարում հավասարաճիշտ և անհավասարաճիշտ չափումները, անհրաժեշտ ու լրացուցիչ չափումները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու թեսթի և գործնական պարապմունքի հիման վրա:

Արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը կարող է պատասխանել թեստում ընդգրկված հարցերի 90 %-ին: Թեստում պետք է ընդգրկված լինեն հարցեր որոնցով հնարավոր կլինի ստուգելու ուսանողի գիտելիքները չափման մեջ իհայտ եկող սխալների, նշանակված չափման միավորների վերաբերյալ, թվերի կլորացման և այլնի վերաբերյալ: Թեստում կարող են նշվել նաև սխալ և այլընտրանքային պատասխաններ:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է գտնել չափումների սխալը, կատարել լրացուցիչ ստուգողական չափում, հաշվարկել և ներկայացնել կլորացված (տասնորդական, հարյուրերորդական և հազարերորդական կլորացումների) թվերի տեսքով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական և տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ուսումնամեթոդական գրականություն, հարդարման աշխատանքներում օգտագործվող չափողական գործիքներ (մետր, անկյունակ, մակարդակաչափ՝ հաղորդակից անոթներով, հարթաչափ, ուղղալար և այլն) և հնարավորության դեպքում տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

Մոդուլի անվանումը՝ <<ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԾԵՓԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՓԱՅՏԱՄԱԾՆԵՐԻ, ԼԱՍՏԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ, ՀԱՎԱՔՈՒՄ, ՔԱՆԴՈՒՄ >>

Մոդուլի դասիչը՝ ՀՇԱԻ-3-11-003

Մոդուլի տևողությունը՝ 20 ժամ

- տեսական պարապմունք՝ 4 ժամ

- գործնական պարապմունք՝ 16 ժամ

Մոդուլի նպատակը՝ Սովորողի մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ծեփագործական աշխատանքներում օգտագործվող փայտամածների, լաստակների կառուցման, հավաքման և քանդման վերաբերյալ:

Մուտքային պահանջներ՝ այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Արդյունքները

1. Ներկայացնել գույքային փայտամածների, լաստակների նշանակությունը, կիրառման բնագավառները:
2. Պատրաստել գույքային փայտամածներ:
3. Պատրաստել հավաքովի լաստակներ:
4. Կատարել գույքային փայտամածների, լաստակների քանդում:

Գնահատման կարգը՝ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ներկայացնել գույքային փայտամածների, լաստակների նշանակությունը, կիրառման բնագավառները:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է ներկայացնում գույքային փայտամածների, լաստակների նշանակությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում գույքային փայտամածների, լաստակների կիրառման բնագավառները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու թեսթի հիման վրա:

Արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը կարող է պատասխանել թեստում ընդգրկված հարցերի 90 %-ին: Թեստում պետք է ընդգրկված լինեն հարցեր տարբեր բաժիններից, որոնցով հնարավոր կլինի ստուգելու ուսանողի գիտելիքները գույքային փայտամածների, լաստակների նշանակության, արտաքին հարդարման համար՝ խողովակային ինվենտարային փայտամածներ, կախովի լաստակներ, ներքինի համար՝ տեղաշարժվող հարթակներ, փոխագուցավոր (տելեսկոպիկ) սեղաններ և այլն, կիրառման բնագավառների (արտաքին և ներքին հարդարման աշխատանքներ) վերաբերյալ: Թեստում կարող են նշվել նաև սխալ և այլընտրանքային պատասխաններ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել տեսական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել փայտամածների, լաստակների մանրակերտեր, գծագրեր, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, դետալներ, ուսումնամեթոդական գրականություն և հնարավորության դեպքում տեսանյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Արդյունք 2. Պատրաստել գույքային փայտամածներ:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կատարում, ըստ մոնտաժման հաջորդականության, փայտամածների տարրերի նախապատրաստումը՝ պահպանելով անվտանգության կանոնները,
- բ. ճիշտ է կատարում տեղի նախապատրաստում՝ փայտամածների տեղադրման համար,
- գ. ճիշտ է պատրաստում գույքային փայտամածներ՝ ըստ տեխնոլոգիական հերթականության, պահպանելով անվտանգության կանոնները,
- դ. ստուգում և գնահատում է պատրաստված գույքային փայտամածի կայունությունը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել փայտամածների տարերի նախապատրաստում, տեղի նախապատրաստում (խորդուբորությունների հարթեցում, տեղի ուղղում, ճիշտ տեղի ընտրում և այլն) տեղադրման համար, գույքային փայտամածների պատրաստում ըստ տեխնոլոգիական հերթականության՝ պահպանելով անվտանգության կանոնները: Կարող է ստուգել և գնահատել պատրաստված գույքային փայտամածի հուսալիությունը աշխատանքների իրականացման համար՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար, որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել փայտամածների մանրակերտեր, դետալներ, անհրաժեշտ գործիքներ, համապատասխան տարածք, գծագրեր, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

Արդյունք 3. Պատրաստել հավաքովի լաստակներ:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է ընտրում հավաքովի լաստակների համար համապատասխան դետալները,
- բ. ճիշտ է հավաքում հավաքովի լաստակներն՝ ըստ պահանջվող տեխնոլոգիական հերթականության,
- գ. ստուգում և գնահատում է հավաքված լաստակների կայունությունը,
- դ. ճիշտ է կատարում հավաքովի լաստակների հավաքման աշխատանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել լաստակների տարերի նախապատրաստում, տեղի նախապատրաստում (խորդուբորությունների հարթեցում, տեղի ուղղում, ճիշտ տեղի ընտրում և այլն) տեղադրման համար, լաստակների պատրաստում ըստ տեխնոլոգիական հերթականության՝ պահպանելով անվտանգության կանոնները: Կարող է ստուգել և գնահատել պատրաստված լաստակների հուսալիությունը աշխատանքների իրականացման համար՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել լաստակների մանրակերտեր, դետալներ, անհրաժեշտ գործիքներ, համապատասխան տարածք, գծագրեր, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

Արդյունք 4. Կատարել գույքային փայտամածների, լաստակների քանդում:

Կատարման չափանիշները.

ա. ճիշտ հերթականությամբ է կատարում գույքային փայտամածի քանդումը,

բ. ճիշտ հերթականությամբ է կատարում լաստակների քանդումը,

դ. ճիշտ է կատարում գույքային փայտամածների, լաստակների քանդման աշխատանքները՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել գույքային փայտամածների և հավաքովի լաստակների քանդում, պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունը և անվտանգության կանոնները: Կատարել փայտամածների և լաստակների վնասված մասերի և դետալների վերանորոգում և խնամքով պահեստավորում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել լաստակների մանրակերտեր, դետալներ, անհրաժեշտ գործիքներ, հավաքված փայտամածներ և լաստակներ, գծագրեր, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

Մոդուլի անվանումը՝ <<ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԾԵՓԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ >>

Մոդուլի դասիչը՝ ՀՇԱԻ-3-11 -004

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

- գործնական պարապմունք՝ 72 ժամ

Մոդուլի նպատակը՝ Մովորողի մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ՝ շենքերի, շինությունների, կառուցվածքների արտաքին ու ներքին մակերևույթների ծեփմանն անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացման համար:

Մուտքային պահանջներ՝ այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՀՇԱԻ-3-11-001 <<Շինարարական նյութեր ծեփագործական աշխատանքների իրականացման համար>>, ՀՇԱԻ-3-11-002 <<Չափագիտություն>>, ՀՇԱԻ-3-11-003 <<Բարձրությունների վրա ծեփագործական աշխատանքներում օգտագործվող փայտամածների, լաստակների կառուցում, հավաքում, քանդում>> մոդուլները:

Արդյունքները

1. Իրականացնել շենքերի և շինությունների արտաքին ու ներքին մակերեսների ծեփման համար աշխատատեղի նախապատրաստում:

2. Պատրաստել մակերեսների նախապատրաստական աշխատանքների համար անհրաժեշտ գործիքները, սարքերը, սարքավորումները:

3. Նախապատրաստել արտաքին և ներքին պատերի մակերևույթը ծեփապատման համար:

Գնահատման կարգը՝ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իրականացնել շենքերի և շինությունների արտաքին ու ներքին մակերեսների ծեփման համար աշխատատեղի նախապատրաստում:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կատարում ծեփվող մակերևույթների ընտրությունը,

բ. ճիշտ է կատարում աշխատանքի մեջ օգտագործվող նյութերի ընտրությունը,

գ. ճիշտ է կատարում ծեփամածիկների, շաղախների, սուսինձների և այլ նյութերի պատարաստումը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել չծեփվող մակերեսների լիարժեք փակում, ըստ տրված առաջադրանքի նախապատրաստական նյութերի (ծեփամածիկներ, շաղախներ և այլ նյութեր) ընտրում և պատրաստում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ծեփման համար անհրաժեշտ մակերես, որի վրա տեղակայված կլինեն (վարդակներ, անջատիչներ և այլն, կամ պայմանական նշվածքներ), ծեփամածիկներ, շաղախներ, գաջ, գիպս, ավազ, ցեմենտ, տարբեր տարողության համապատասխան տարաններ, գործիքներ, սարքեր և այլն, սխեմաներ, ուսումնական ցուցապատառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 30 ժամ

Արդյունք 2. Պատրաստել մակերեսների նախապատրաստական աշխատանքների համար անհրաժեշտ գործիքները, սարքերը, սարքավորումները:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ընտրում մակերեսների նախապատրաստական աշխատանքների իրականացման համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումներն՝ ըստ նշանակության,

բ. ստուգում է և ճիշտ է որոշում գործիքների սարքին լինելը,

գ. ճիշտ է օգտագործում նախապատրաստական աշխատանքների համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ընտրել մակերեսների նախապատրաստական աշխատանքների իրականացման համար

նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումներն ստուգել է և ճիշտ է որոշել գործիքների սարքին լինելը, օգտագործել ընտրված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել նախապատրաստական աշխատանքներում օգտագործվող գործիքները, սարքերը, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 16 ժամ

Արդյունք 3. Նախապատրաստել արտաքին և ներքին պատերի մակերևույթը ծեփապատման համար:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է իրականացնում ծեփման համար մակերևույթների նախապատրաստական աշխատանքները (պատի շարքի կարերը խորոցնել մինչև 10մմ ծեփման շաղախի և մակերևույթի միջև կապակցվածությունը մեծացնելու համար)
- բ. ճիշտ է իրականացնում ծեփման համար մակերևույթների նախապատրաստական աշխատանքները (մաքրել մակերևույթը շարքի կատարման ժամանակ առաջացած շաղախի արտահոսքերից)
- գ. ճիշտ է իրականացնում ծեփման համար հարթ բետոնե մակերևույթների նախապատրաստական աշխատանքները (մակերևույթների վրա ստեղծել փոսիկներ մոտ 3մմ խորությամբ և 150մմ երկարությամբ ծեփահարդարման շաղախի և մակերևույթի միջև կապակցվածությունը մեծացնելու համար)
- դ. ճիշտ է կատարում բոլոր գործողությունները պահպանելով անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել՝ ծեփման համար մակերևույթների նախապատրաստական աշխատանքները (պատի շարքի կարերը խորոցնել մինչև 10մմ ծեփման շաղախի և մակերևույթի միջև կապակցվածությունը մեծացնելու համար), մաքրել մակերևույթը շարքի կատարման ժամանակ առաջացած շաղախի արտահոսքերից, ծեփման համար հարթ բետոնե մակերևույթների նախապատրաստական աշխատանքները (մակերևույթների վրա ստեղծել փոսիկներ մոտ 3մմ խորությամբ և 150մմ երկարությամբ ծեփահարդարման շաղախի և մակերևույթի միջև կապակցվածությունը մեծացնելու համար) և բոլոր գործողությունները պահպանելով անվտանգության կանոնները: Վերը թվարկված աշխատանքները կընդունվեն բավարար, եթե ապահովված է շինարարական նորմերի բավարար մակարդակ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել նախապատրաստական աշխատանքներում օգտագործվող նյութեր (ծեփամածիկ, գիպս, գաջ, ցեմենտ, ավազ, ճաքի ամրացման ցանց և այլ նյութեր), գործիքներ սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 26 ժամ

Մոդուլի անվանումը՝ «ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԾԵՓԱՊԱՏՈՒՄ >>

Մոդուլի դասիչը՝ ՀՇԱԻ-3-11-005

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

գործնական պարապմունք՝ 72 ժամ

Մոդուլի նպատակը՝ Սովորողի մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ներքին և արտաքին պատերի ծեփման և վերանորոգման աշխատանքների վերաբերյալ:

Մուտքային պահանջներ՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՀՇԱԻ-3-11-001<<Շինարարական նյութեր ծեփագործական աշխատանքների իրականացման համար>>, ՀՇԱԻ-3-11-002 <<Չափագիտություն>>, ՀՇԱԻ-3-11-003 <<Բարձրությունների վրա ծեփագործական աշխատանքներում օգտագործվող փայտամածների, լաստակների կառուցում, հավաքում, քանդում>> և ՀՇԱԻ 3-11-004 <<Շենքերի և շինությունների արտաքին և ներքին մակերեսների ծեփապատման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ>> մոդուլները:

Արդյունքները

1. Նախապատրաստել աշխատատեղի ներքին և արտաքին պատերի մակերևույթների ծեփման համար:
2. Պատրաստել ներքին և արտաքին պատերի մակերևույթների ծեփման համար անհրաժեշտ գործիքներ, սարքեր, սարքավորումներ
3. Ներքին և արտաքին պատերի մակերևույթների ծեփման և վերանորոգման աշխատանքներ ցեմենտ-ավազե շաղախով:
4. Իրականացնել մակերևույթի հարդարում և վերանորոգում գաջի շաղախով:

Գնահատման կարգը՝ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Նախապատրաստել աշխատատեղի ներքին և արտաքին պատերի մակերևույթների ծեփման համար:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է կատարում չծեփվող՝ մեկուսացվող և առանձնացվող մակերևույթների պահպանումը,
- բ. ճիշտ է ընտրում աշխատանքի մեջ օգտագործվող նյութերը,
- գ. ճիշտ է կատարում ծեփանյութի և այլ նյութերի պատարաստումը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել չծեփվող՝ մեկուսացվող և առանձնացվող մակերևույթների պահպանումը, ծեփանյութի և այլ նյութերի պատարաստումը և պահպանելով, ճիշտ է ընտրում աշխատանքի մեջ օգտագործվող նյութերը՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել շին. նյութեր աշխատանքների իրականացման համար նախատեսված օգտագործվող գործիքներ, սարքեր, սարքավորումներ, սխեմաններ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 12 ժամ

Արդյունք 2. Պատրաստել ներքին և արտաքին պատերի մակերևույթների ծեփման համար անհրաժեշտ գործիքներ, սարքեր, սարքավորումներ

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ընտրում ներքին և արտաքին պատերի մակերևույթների ծեփման համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումներն՝ ըստ նշանակության,

բ. ճիշտ է ստուգում և որոշում գործիքների սարքին լինելը,

գ. ճիշտ է օգտագործում ծեփման աշխատանքների համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները,

դ. ճիշտ է կատարում գործիքների մաքրումը, խնամումը, պահպանումը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ընտրել ներքին և արտաքին պատերի մակերևույթների ծեփման համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումներն՝ ըստ նշանակության, ստուգել և որոշել գործիքների սարքին լինելը, օգտագործել ծեփման աշխատանքների համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումները և կատարել գործիքների մաքրումը, խնամումը՝ պահպանելով անվտանգության կանոնները: :

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ծեփման աշխատանքների իրականացման համար նախատեսված օգտագործվող գործիքներ, սարքեր, սարքավորումներ, սխեմաններ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 22 ժամ

Արդյունք 3. Ներքին և արտաքին պատերի մակերևույթների ծեփման և վերանորոգման աշխատանքներ ցեմենտ-ավազե շաղախով:

Կատարման չափանիշները

ա. նախապատրաստած մակերևույթը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջին՝ ցեմենտ ավազե շաղախով սվաղելու համար,

բ. ճիշտ է կատարում սվաղային աշխատանքը՝ շինարարական նորմերի պահանջներին համապատասխան,

գ. ճիշտ է իրականացնում մակերևույթի թույլ սվաղի հեռացումը,

դ. ճիշտ է կատարում ներքին և արտաքին պատերի ծեփված մակերևույթի վերջնամշակումը և թերությունների վերացումը,

ե. ճիշտ է կատարում ավելացած ծեփանյութի պահպանումը,

զ. ճիշտ է իրականացնում պատերի ծեփման և վերանորոգման աշխատանքը՝ պահպանելով անվտանգության անոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է նախապատրաստել մակերևույթը համապատասխան շինարարական նորմերի պահանջին՝ ցեմենտ ավազե շաղախով սվաղելու համար, կատարում է սվաղային աշխատանքը, մակերևույթի թույլ սվաղի հեռացումը, ներքին և արտաքին պատերի ծեփված մակերևույթի վերջնամշակումը և թերությունների վերացումը, ավելացած ծեփանյութի պահպանումը շինարարական նորմերի պահանջներին համապատասխան և իրականացնում պատերի ծեփման և վերանորոգման աշխատանքներ՝ պահպանելով անվտանգության անոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել շին. նյութեր, ծեփամածիկներ, շաղախանյութեր, ինչպես նաև սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 22 ժամ

Արդյունք 4. Իրականացնել մակերևույթի հարդարում և վերանորոգում գաջի շաղախով:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կատարում մակերևույթի հարդարումը գաջի շաղախով,

բ. ճիշտ է իրականացնում հին սվաղի վերանորոգումը,

զ. ճիշտ է իրականացնում ծեփապատման և վերանորոգման աշխատանքները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել մակերևույթի հարդարումը գաջի շաղախով, հին սվաղի վերանորոգումը և ծեփապատման և վերանորոգման աշխատանքները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Դրական գնահատվելու համար, ուսանողը պետք է կարողանա, անվտանգության կանոնները պահպանելով՝ իրականացնի ծեփապատման և վերանորոգման աշխատանքները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ծեփման համար անհրաժեշտ շինարարական նյութեր՝ ծեփամածիկներ, շաղախանյութեր, ինչպես նաև սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 16 ժամ

Մոդուլի անվանումը՝ <<ԱՌԱՍՏԱՂԻ ԾԵՓԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿՆԵՐԸ>>

Մոդուլի դասիչը՝ ՀՇԱԻ-3-11 -006

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ

Գործնական պարապմունք՝ 54 ժամ

Մոդուլի նպատակը՝ Սովորողի մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ առաստաղի ծեփապատում կատարելու համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացման համար:

Մուտքային պահանջներ՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՀՇԱԻ-3-11-001 <<Շինարարական նյութեր ծեփագործական աշխատանքների իրականացման համար>>, ՀՇԱԻ-3-11-002 <<Չափագիտություն>>, ՀՇԱԻ-3-11-003 <<Բարձրությունների վրա ծեփագործական աշխատանքներում օգտագործվող փայտամածների, լաստակների կառուցում, հավաքում, քանդում>> մոդուլները:

Արդյունքները

1. Իրականացնել առաստաղի ծեփագործական աշխատանքների համար նախատեսված նախապատրաստումը և մշակումը:

2. Նախապատրաստել առաստաղի ծեփագործական աշխատանքներ կատարելու համար բոլոր օգտագործվող գործիքները:

3. Իրականացնել առաստաղի հարթեցնող շերտ:

Գնահատման կարգը՝ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իրականացնել առաստաղի ծեփագործական աշխատանքների համար նախատեսված նախապատրաստումը և մշակումը:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է նախապատրաստում առաստաղի մշակման աշխատանքները,

բ. ճիշտ է իրականացնում փայտամածերի և լաստակների կառուցումը,

գ. ճիշտ է կատարում բոլոր գործողությունները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է նախապատրաստել առաստաղի մշակման աշխատանքները, կատարել փայտամածերի և լաստակների կառուցում՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ծեփման համար անհրաժեշտ շին. նյութեր, տարբեր տարողության համապատասխան տարաններ, գործիքներ, սարքեր և այլն, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

Արդյունք 2. Նախապատրաստել առաստաղի ծեփագործական աշխատանքներ կատարելու համար բոլոր օգտագործվող գործիքները:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է ընտրում առաստաղի աշխատանքների համար նախատեսված գործիքներն ըստ նշանակության,
- բ. ճիշտ է օգտագործում է ծեփագործական աշխատանքների համար նախատեսված բոլոր գործիքները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ընտրել առաստաղի ծեփման նախապատրաստական աշխատանքների իրականացման համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումներն ստուգել է և ճիշտ է որոշել գործիքների սարքին լինելը, օգտագործել ընտրված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել նախապատրաստական աշխատանքներում օգտագործվող գործիքները, սարքերը, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 24 ժամ

Արդյունք 3. Իրականացնել առաստաղի հարթեցնող շերտ:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է ընտրում առաստաղի հարթեցնող շերտի համար անհրաժեշտ շինարարական նյութերը ըստ առաջադրանքի,
- բ. ճիշտ է իրականացնում առաստաղի հարթեցնող շերտի համապատասխանեցումը շինարարական նորմերի պահանջին,

գ. ճիշտ է իրականացնում հարթեցնող շերտի նախապատրաստման աշխատանքները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ընտրել՝ առաստաղի հարթեցնող շերտի համար անհրաժեշտ շինարարական նյութերն ըստ առաջադրանքի, իրականացնի առաստաղի հարթեցնող շերտի համապատասխանեցումը շինարարական նորմերի պահանջին և հարթեցնող շերտի նախապատրաստման աշխատանքները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Վերը թվարկված աշխատանքները կընդունվեն բավարար, եթե ապահովված է շինարարական նորմերի բավարար մակարդակ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել նախապատրաստական աշխատանքներում օգտագործվող նյութեր (ծեփամածիկ, շաղախանյութ և այլ նյութեր) գործիքներ, սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 24 ժամ

Մոդուլի անվանումը՝ <<ԱՌԱՍՏԱՂԻ ԾԵՓԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՈՒՄ>>

Մոդուլի դասիչը՝ ՀՇԱԻ-3-11 -007

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ

Գործնական պարապմունք՝ 54 ժամ

Մոդուլի նպատակը՝ Մովորողի մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ առաստաղի ծեփապատում կատարելու համար անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար:

Մուտքային պահանջներ՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՀՇԱԻ-3-11-001<<Շինարարական նյութեր ծեփագործական աշխատանքների իրականացման համար>>, ՀՇԱԻ-3-11-002 <<Չափագիտություն>>, ՀՇԱԻ-3-11-003 <<Բարձրությունների վրա ծեփագործական աշխատանքներում օգտագործվող փայտամածների, լաստակների կառուցում, հավաքում, քանդում>> և ՀՇԱԻ 3-11-006 <<Առաստաղի ծեփապատման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ >> մոդուլները:

Արդյունքները

1. Առաստաղի ծեփապատման համար նախընտրելի աշխատատեղի նախապատրաստում:
2. Իրականացնել առաստաղի ծեփապատում:
3. Իրականացնել առաստաղի ծեփագործական վերանորոգում:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Առաստաղի ծեփապատման համար նախընտրելի աշխատատեղի նախապատրաստում:

Կատարման չափանիշները

- ա. Ճիշտ է ընտրում առաստաղի ծեփման համար անհրաժեշտ գործիքները և սարքերը,
- բ. Ճիշտ է ստուգում և որոշում ծեփագործական գործիքների և սարքերի աշխատանքային պիտանելիությունը,
- գ. Ճիշտ է կատարում ծեփանյութի պատրաստում,
- դ. Ճիշտ է առանձնացնում չծեփվող մակերևույթները:
- ե. Ճիշտ է կատարում առաստաղի մակերևույթի հղկումը և հարթեցումը, ճաքալցումն ու ճեղքապատումը,
- զ. Ճիշտ է պահպանում աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:

Գնահատման միջոցը.

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել՝ առաստաղի ծեփման համար անհրաժեշտ գործիքների և սարքերի ընտրություն, ծեփագործական գործիքների և սարքերի աշխատանքային պիտանելիության ստուգում, առաստաղի մակերևույթի հղկումը և հարթեցումը, ճաքալցումն ու ճեղքապատումը, ծեփանյութի պատրաստում, առաստաղի մակերևույթի հղկումը և հարթեցումը, ճաքալցումն ու ճեղքապատումը, չծեփվող մակերևույթների առանձնացում անվտանգության կանոնների ու նորմերի պահպանում:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ծեփապատման համար անհրաժեշտ նախապատրաստված մակերես, որի վրա տեղակայված կլինեն (շրիշակներ, ապակիներ, փականներ և այլն, կամ պայմանական նշվածքներ), տարբեր տեսակի ծեփանյութեր և այլն, տարբեր տարողության համապատասխան տարաններ, գործիքներ, սարքեր և այլն, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 16 ժամ

Արդյունք 2. Իրականացնել առաստաղի ծեփապատում:

Կատարման չափանիշները.

- ա. Ճիշտ է հաշվարկում ծեփանյութի անհրաժեշտ քանակը,
- բ. Ճիշտ է կատարում ցեմենտ-ավազե շաղախով սվաղը,
- գ. Ճիշտ է կատարում գաջի շաղախով մակերևույթի հարդարումը,
- դ. Ճիշտ է վերացնում ծեփապատված առաստաղի մակերևույթի անհարթությունները և թերությունները,
- ե. Ճիշտ է կազմակերպում ավելացած ծեփանյութի պահպանումը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել ծեփանյութի անհրաժեշտ քանակը հաշվարկ, ցեմենտ-ավազե շաղախով սվաղը, գաջի շաղախով մակերևույթի հարդարումը, ծեփապատված առաստաղի մակերևույթի անհարթությունների և թերությունների վերացումը և կազմակերպում ավելացած ծեփանյութի պահպանումը՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ծեփագործական աշխատանքներում օգտագործվող գործիքներ, սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 18 ժամ

Արդյունք 3. Իրականացնել առաստաղի ծեփագործական վերանորոգում:

Կատարման չափանիշները.

- ա. Ճիշտ է ընտրում և հաշվարկում առաստաղի նորոգման ենթակա մակերևույթները,
- բ. Ճիշտ է կազմում նորոգման գործողությունների հաջորդական ցանկը,
- գ. Ճիշտ է կատարում նորոգման ենթակա մակերևույթների ծեփապատումը,
- դ. Ճիշտ է պահպանում նորոգման աշխատանքների տեխնոլոգիական սկզբունքները,
- ե. Ճիշտ է խնամում, դասավորում և պահպանում ծեփագործական գործիքներն ու սարքերը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել՝ առաստաղի նորոգման ենթակա մակերևույթների ընտրություն և հաշվարկում, կազմում նորոգման գործողությունների հաջորդական ցանկը, ծեփապատում նորոգման ենթակա մակերևույթները, պահպանում նորոգման աշխատանքների տեխնոլոգիական սկզբունքները և աշխատանքի ավարտից հետո խնամում, դասավորում և պահպանում ծեփագործական գործիքներն ու սարքերը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ծեփագործական աշխատանքներում օգտագործվող գործիքներ, սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 20 ժամ

Մոդուլի անվանումը՝ «ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՉՈՐ ՄՎԱՂԻ ԹԵՐԹԵՐՈՎ ԵՐԵՄՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ ՀՇԱԻ-3-11 -008

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

գործնական պարապմունք՝ 72 ժամ

Մոդուլի նպատակը՝ Մովորողի մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ՝ մակերևույթների «չոր սվաղի» թերթերով երեսապատման աշխատանքների իրականացման վերաբերյալ: **Մուտքային պահանջներ՝** Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՀՇԱԻ-3-11-001«Շինարարական նյութեր ծեփագործական աշխատանքների իրականացման համար», ՀՇԱԻ-3-11-002 «Չափագիտություն», ՀՇԱԻ-3-11-003 «Բարձրությունների վրա ծեփագործական աշխատանքներում օգտագործվող փայտամածների, լաստակների կառուցում, հավաքում, քանդում» և ՀՇԱԻ 3-11-005 «Ներքին և արտաքին մակերևույթների ծեփապատում» մոդուլները:

Արդյունքները

1. Նախապատրաստել պատերը և առաստաղը «չոր սվաղի» թերթերով երեսապատման,
2. Նախապատրաստել երեսապատման համար անհրաժեշտ գործիքները, սարքերը, սարքավորումները,
3. Իրականացնել մակերևույթների երեսապատում «չոր սվաղի» թերթերով:

Գնահատման կարգը՝ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Նախապատրաստել պատերը և առաստաղը «չոր սվաղի» թերթերով երեսապատման:

Կատարման չափանիշները

- ա. ճիշտ է նախապատրաստում պատերը ինչպես մետաղե հիմնակմախքով , այնպես էլ առանց հիմնակմախքի երեսապատման,
- բ. ճիշտ է ընտրում մետաղե հիմնակմախքի համապատասխան էլեմենտները (մետաղե պրոֆիլների տիպերը, ներդիր էլեմենտները, կախիչները),
- գ.ճիշտ է նախապատրաստում առաստաղները մետաղե հիմնակմախքի վրա «չոր սվաղի» թերթերով երեսապատման համար,
- դ. ճիշտ է նախապատրաստված մակերևույթը, որը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջներին:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել՝ պատերը ինչպես մետաղե հիմնակմախքով, այնպես էլ առանց հիմնակմախքի երեսապատմանը նախապատրաստելը, մետաղե հիմնակմախքի համապատասխան էլեմենտների (մետաղե պրոֆիլների տիպերը, ներդիր էլեմենտները, կախիչները) ընտրությունը, առաստաղները մետաղե հիմնակմախքի վրա «չոր սվաղի» թերթերով երեսապատման համար նախապատրաստելը համապատասխան շինարարական նորմերի պահանջներին::

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել «չոր սվադի» թերթերով երեսապատման համար անհրաժեշտ նախապատրաստված (տարբեր տրամագծի գլանիկներ, անկյունակներ, թիթեղներ, եռակցվաց դետալներ և այլն), որի վրա տեղակայված կլինեն պայմանական նշվածքներ, տարբեր տեսակի ծեփանյութեր, և այլն, տարբեր տարողության համապատասխան տարաններ, գործիքներ, սարքեր, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 16 ժամ

Արդյունք 2. Նախապատրաստել երեսապատման համար անհրաժեշտ գործիքները, սարքերը, սարքավորումները:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ընտրում տարբեր մակերևույթների ծեփահարդարման համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ ըստ նշանակության,

բ. ճիշտ է ստուգում և որոշում գործիքների սարքին լինելը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ընտրել տարբեր մակերևույթների ծեփահարդարման համար նախատեսված գործիքները, ստուգում և որոշում գործիքների սարքին լինելը: Կարող է օգտագործել ընտրված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել ծեփագործական աշխատանքներում օգտագործվող գործիքներ, սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 18 ժամ

Արդյունք 3. Իրականացնել մակերևույթների երեսապատում «չոր սվադի» թերթերով:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է կատարված առանց մետաղե հիմնակմախքի մակերևույթների երեսապատումը «չոր սվադի» թերթերով, որը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջներին,

բ. ճիշտ է կատարված պատերի և առաստաղի երեսապատումը մետաղե հիմնակմախքի վրա «չոր սվադի» թերթերով, որը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջներին,

գ. ճիշտ է իրականացնում աշխատանքները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել՝ առանց մետաղե հիմնակմախքի մակերևույթների երեսապատումը «չոր սվաղի» թերթերով, պատերի և առաստաղի երեսապատումը մետաղե հիմնակմախքի վրա «չոր սվաղի» թերթերով, որը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջներին և պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել «չոր սվաղի» թերթերով երեսապատման աշխատանքներում օգտագործվող գործիքներ, սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

գործնական պարապմունք՝ 38 ժամ

Մոդուլի անվանումը՝ <<ՊԱԸ ԵՎ ՓՈՔԸՄՍՄՎԱԼ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԴԵՏԱԼՆԵՐԻ ԱՄՐԱՅՈՒՄ>>

Մոդուլի դասիչը՝ ՀՇԱԻ-3-11 -009

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Գործնական պարապմունք՝ 36 ժամ

Մոդուլի նպատակը՝ սովորողի մոտ ձևավորել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, ըստ տեխնոլոգիայի, պարզ և փոքրածավալ դետալների ամրացման համար:

Մուտքային պահանջներ՝ այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՀՇԱԻ-3-11-001<<Շինարարական նյութեր ծեփագործական աշխատանքների իրականացման համար>>, ՀՇԱԻ-3-11-002 <<Չափագիտություն>>, ՀՇԱԻ-3-11-003 <<Բարձրությունների վրա ծեփագործական աշխատանքներում օգտագործվող փայտամածների, լաստակների կառուցում, հավաքում, քանդում>> մոդուլները:

Արդյունքները

1. Պատրաստել պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացման համար անհրաժեշտ գործիքներ, սարքեր, սարքավորումներ:
2. Իրականացնել պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները:
3. Իրականացնել պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացում:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Պատրաստել պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացման համար անհրաժեշտ գործիքներ, սարքեր, սարքավորումներ:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է ընտրում պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ձևման, կտրման և ամրացման համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ ըստ նշանակության,

բ. ստուգում է և ճիշտ է որոշում գործիքների սարքին լինելը,

գ. ճիշտ է օգտագործում պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ձևման, կտրման ու ամրացման համար նախատեսված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները,

դ. ճիշտ է կատարում գործիքների մաքրում, խնամք, պահպանում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է ընտրել պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ձևման, կտրման և ամրացման համար նախատեսված, նախապատրաստական աշխատանքների իրականացման համար նախատեսված՝ գործիքները, սարքերը, սարքավորումներն ստուգել է և ճիշտ է որոշել՝ գործիքների սարքին լինելը: Կարող է օգտագործել ընտրված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել անհրաժեշտ պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ձևման, կտրման և ամրացման համար նախատեսված գործիքներ, սարքեր, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

Արդյունք 2. Իրականացնել պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները:

Կատարման չափանիշները

ա. ճիշտ է իրականացնում պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացման համար հիմնատակի նախապատրաստական աշխատանքները,

բ. ճիշտ է իրականացնում պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների չափաձևում,

գ. ճիշտ է իրականացնում պարզ և փոքրածավալ չափաձևած դեկորատիվ դետալների կտրում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել՝ դեկորատիվ դետալների ամրացման համար հիմնատակի նախապատրաստում (հին ներկի մաքրում, կեղտի հեռացում, ավել ոչ պետքական մսերի հեռացում և այլն): Կարողանում է կատարել պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների չափաձևում և կտրում: Կատարում է տրված առաջադրանքը օգտագործելով ընտրված գործիքները, սարքերը, սարքավորումները՝ պահպանելով անվտանգության կանոնները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել անհրաժեշտ պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալներ (գիպսային զարդանախշեր, շրիշակներ, անկյունակալներ, գաճաբաժաններ և այլն), ձևման, կտրման և ամրացման համար նախատեսված գործիքներ, սարքերը, սարքավորումներ, սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 14 ժամ

Արդյունք 3. Իրականացնել պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացում:

Կատարման չափանիշները.

- ա. ճիշտ է իրականացնում գծային դեկորատիվ դետալների ամրացում՝ սուսինձներով,
- բ. ճիշտ է իրականացնում գծային դեկորատիվ դետալների ամրացում՝ գիպսով,
- գ. ճիշտ է իրականացնում փոքրածավալ նախշային և մակերեսային դեկորատիվ դետալների ամրացում՝ սուսինձներով,
- դ. ճիշտ է իրականացնում փոքրածավալ նախշային և մակերեսային դեկորատիվ դետալների ամրացում՝ գիպսով:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե ուսանողը ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է կատարել՝ պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացում՝ օգտագործելով ամրացման համար օգտագործվող տարբեր նյութեր (օրինակ՝ գիպս, էմուլսիա, գամ, գաջ և այլն):

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Արդյունքի արդյունավետ յուրացման համար որպես ուսուցման մեթոդ նպատակահարմար է կիրառել գործնական պարապմունք:

Որպես ռեսուրս պետք է տրամադրել անհրաժեշտ պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների (գիպսային զարդանախշեր, շրիշակներ, անկյունակալներ, գաճաբաժաններ և այլն), ամրացման համար անհրաժեշտ նյութեր (օրինակ՝ գիպս, էմուլսիա, գամ, գաջ և այլն), սխեմաներ, ուսումնական ցուցապաստառներ, ուսումնամեթոդական գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը

Գործնական պարապմունք՝ 14 ժամ